

ՅԱԻԵԼՈՒԱԾ Ա. 156.

Բ. Գիրք 161. պատկ. 186.

ԹԱՆԱՏԻ ՎԱՆՔ

Հարաւային պատին արեւելեան կողմը.

1. (Կամաւն Այ եւ) անճ ար ս ու Թաճմլը քս մի ա բան եց աք սը Ստեփա
2. (նոսիս տվաք զԿկու) ա քար ին հողն Հոյվ վե նց հող ով ն մի ար ան քս տվին: . .
3. (հինգ ժամ Վարադայ խաչին) տ աւ ն ին կատվ հա տ նե աւ ազ նեւ տվաք:

ԾԱՆՈԹ.— Գրուած է 18բ.—ի, այսինքն խուժուրէքի արձանագրութեան տակ եւ նոյն գրչով, որով եւ ժամանակն է որոշուած 1284—1292 թ.թ. (տես այս Գրքի էջ 15—16):

Առաջին եւ երկրորդ տողերի փակագծի մէջ առնրւածներն վերցնում ենք Ջալալեանից Բ. 208. երրորդ տողի սկիզբը նոյնպէս, որ աղճատուած է եւ պակասաւոր. չունի «տաւնին կատվհատնեաւ» բառերը: Ալիշան Սիսակ, 123 հետեւել է Ջալալեանին: Ouw. Mat. XIII. չունի, ինչպէս եւ Քաջբերունին:

ՅԱԻԵԼՈՒԱԾ Ա. 157.

ԹԱՆԱՏԻ ՎԱՆՔ. Բ. Գիրք 162.

Տաճարի ներսը հիւսիսային պատի վերայ.

1. Կամաւն Այ եւ Թաճմլը քս դուս տը Մի ի
2. Թարա Թոռն խա լաչահի տ վի: Ա: վե ցկի իմ
3. գեր եզ մա նա տ ու նա մի արա նիս սահման եց ին
4. :Դ: Ժ աւ Ս ան դ խտո տ աւ ն ին: Բ: ին ճ: Բ:
5. իմ մ աւ ր կատ ար իչք աւ րհն ին Այ:

ԾԱՆՈԹ.— Ջալ. Բ. 208: Ալիշան. Սիսակ. 123: Ouw. Mat. XIII. 127. սխալներով. «Թաճամլէքս», «Նիլաչահի», «ի սուրբ եկեղեցի զիմ» պէտք է լինի «Ա: վեցկի իմ», «Սանդխտի խորանին» պէտք է լինի «Սանդխտ տաւնին», թէեւ ունի լուսանկարը (Թիւ 107), որով վերստուգել ենք մենք:

ՅԱԻԵԼՈՒԱԾ Ա. 158.

Բ. Գիրք 162. պատկ. 60

ԹԱՆԱՏԻ ՎԱՆՔ

Արեւմտեան դրան կամարի գլխին

1. Կ աւ աւ ն Այ եւ Աւազ (ն) աթ ունս աւ ու սին Վաղթանկա որ դ

2. ոյ խալաչահի տվի: Ճ: դե կ ան սը Ստեփան ո սի ս Վ ար ազա

4. սը նչանիս վ դե քս մի ար անքս սահմանէցին: Դ: ար պատ ար

4. ագ: Բ: ծառազ ար դ արին: Բ: զատկին կատ ար իչքն ար հն

5. ին: Թվ ԶԿԲ: խա փ ան ող ն դա տի

ԾԱՆՈԹ.— Արձանագրութիւնս գտնուած է տաճարի արեւմտեան դրան կամարի գլխին: Տողերի սկիզբը նաւորութիւնը մաշուած է քիչ, ուստի եւ առաջին տողի մէջ Աւազխաթունս ընդգծուած մասը կասկածելի: Ալիշան «Վախտանդայ որդւոյ» սխալ ընթերցումով: Երկրորդ տողում «դեկան» բառի մէջ «ան» լիզատուրան այնպէս է, որ կարելի է նա կարդալ, այսինքն ն—ի բնորոշ քիթը ա—ի առաջին դծի գլխին է գրած: Նոյնը «Ստեփանոսիս» բառի մէջ, նոյնը եւ «խափ ան ողն» բառի մէջ հինգերորդ տողում: Չորրորդ տողի մէջ «ծառազարդ արին» բառի վերջին երկու վանկի լիզատուրան կարելի է կարդալ նախին: Հինգերորդ տողի մէջ «Թվ. ԶԿԲ» թուականը ունին Ջալ. եւ Ալիշան, իսկ ամբողջ արձանագրութիւնը Քաջբերունի եւ Ouw. Mat.:

Երկրորդ տողում յիշուած «խալաչահի» որդւոց եւ թոռների մասին տես արձ. Թիւ 156. 157. 172:

Ջալ. Բ. 211: Ալիշան Սիսակ. 122: Քաջբ. Ար. 1889. 107 Ouw. Mat. XIII. 131. չկարդալով արձանագրութիւնը նկատում է, թէ վերեւ ուղիղանկիւն չըրջանակի մէջ գտնուած է մի արձանագրութիւն խիստ փչացած, խօսելով Աւազի զոհարեութեան մասին 1313 թուին:

ՅԱԻԵԼՈՒԱԾ Ա. 159.

Բ. Գիրք 165. պատկ. 188.

ԹԱՆԱՏԻ ՎԱՆՔ

Արեւելեան պատին.

1. Կամ աւ ն Այ եւ Հաս
2. իկ շինեցի զաս ար
3. անոցն եւ տ վի Վ ար ազ
4. ա սը նչանիս սը Ստ
5. եփան ոսի վդ մի արան քս
6. տվին: Դ: Ժ աւ քառասն
7. ից տ աւ նին կատ ար իչ
8. քն ար հնին յԱյ Թվին
9. ԶԿ.

ԾԱՆՈԹ.— Ջալ. չունի: Քաջբ. Արար. 1889. եր. 104. «Յուսիկ» փոխանակ «Հասիկ», «զայս սրբանոցն» պէտք է լինի ըստ բնագրին «զաս ար անոցն». «նիս»,